Արձանագրություն N2

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքների ամփոփման նիստի

ք. Երևան 30 հոկտեմբերի 2018թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1. Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի վերաբերյալ

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել ս. թ. հոկտեմբերի 26-ին ժամը 12:00-ին:

2. էլեկտրոնային աճուրդը սկսելու վերաբերյալ

էլեկտրոնային աճուրդն սկսվել է հայտը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ ս. թ. հոկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և էլեկտրոնային հասցեները

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցե
1	«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ	info@splashusa.am

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Չափաբաժին	Ընկերություն	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Նախահաշվային գներ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ	458850	91770	550620	458850	91770	550620	**551000**

5. Տվյալներ՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը որոշեց, որ վերջինիս հայտը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետով համակարգի միջոցով ծանուցել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

8. ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 05.11.2018թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Ա. Խուդինյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան